## ՀԵՏԱՔՐՔԻՐ Է ԻՄԱՆԱԼ

*Բացի գիտության, արդյունաբերության և կապի ոլորտներից, լազերնե-րը լայն կիրառություն են ստացել բժշկության ոլորտում: Նրանք էականորեն փոխեցին հիվանդությունների ախտորոշման ու բուժման ավանդական մե-թոդները:*

*Լազերի օգնությամբ վերացնում են մաշկի անկատարությունները և նո-րագոյացությունները, հեռացնում են դաջվածքները, պիգմենտացիան, անո-թային ախտահարումները, տարատեսակ ապիներ, կատարում են մազե-րի էպիլյացիա, հոնքերի շտկում, իրականացնում տարբեր բարդության ու տևականության մի շարք այլ բնույթի գործողություններ:*

*Լազերներն օգտագործվում են ստամոքսի, թոքերի, լյարդի վիրահա-տություններում, ողնաշարի և ողնուղեղի ուռուցքների հայտնաբերման ու հեռաց-ման գործողություններում: Լազերներն ապահովում է գործողությունների բարձր ճշգրտություն և արդյունավետություն, նվազագույնի հասցնելով շրջա-կա հյուսվածքների վնասումը և նվազեցնելով վերականգնման ժամանակը:*

*Լազերների օգնությամբ ներկայումս մեծ հաջողությամբ բուժում են աչ-քերի զանազան հիվանդություններ՝ գլաուկոմա, կատարակտ, կարճատե-սություն և այլն:*